ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

0005, Երևան, Բուռնազյան 37, հեռ.՝ 57-84-53, 57-84-55, կայք՝ www.ktak.am, էլ. փոստ՝ info@ktak.am

№ 146/23

04.12.2023թ.

ՀՀ ֆինանսների նախարար

Վահե Հովհաննիսյանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ–ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

08.09.2023թ. հայտարարվել էր «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կարիքների համար «Հոկտեմբերի 20-22-ը Գյումրի քաղաքի հյուրանոցում իթվինինգի ուսուցիչների աշխատանքային խորհրդակցության անցկացման» ծառայության ձեռքբերման նպատակով 08.09.2023թ. հայտարարվել էր «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նշված գնման ընթացակարգին հայտ էր ներկայացրել 4 մասնակից, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ էր ներկայացրել նաև «Իվենթ Սիթի» ՍՊԸ–ն, որը ճանաչվել է ընտրված մասնակից, և օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել «Իվենթ Սիթի» ՍՊԸ–ին:

Ընտրված մասնակից ճանաչված «Իվենթ Սիթի» ՍՊԸ–ն մինչև սահմանված ժամկետի լրանալը չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի ապահովումները: Ընդ որում պայմանագիր կնքելու առաջարկը վերջինիս ներկայացվել է 2 անգամ՝ առաջին անգամ սահմանված ժամկետի ավարտի օրը «Իվենթ Սիթի» ՍՊԸ–ն առարկությունով գրություն էր հանձնել Հայփոստին, որը ԿՏԱԿ–ը ստացել է պայմանագիր կնքելու ժամկետը լրանալուց հետո: Պայմանագրի նախագծում ԿՏԱԿ–ի

կողմից ավելացվել էր 2.4.4 կետը՝ «2.4.4 Երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գրավոր ներկայացնել այն հյուրանոցի տվյալները՝ անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, որտեղ անցկացվելու է խորհրդակցությունը»: Առարկությունը հետևյալն էր, որ պայմանագրի նախագիծը չի համապատասխանում «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հրավերում ներկայացված պայմանագրի նախագծին:

Երկրորդ անգամ նույնպես մասնակիցը պայմանագիր կնքելու համար սահմանված ժամկետի վերջին օրը նոր գրություն էր ուղարկել կրկին Հայփոստի միջոցով, որը ԿՏԱԿ–ին է հասել 2023թ. հոկտեմբերի 18–ին ժամը 16:30՝ 2 օր ուշացումով: Այս անգամ նույնպես չէր ներկայացվել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները: Փոխարենը՝ ներկայացվել էր մի անհեթեթ գրություն, որում ասվում էր, որ պայմանագրի նախագծի 7.11 պարբերության մեջ լրացված չէ պայմանագրի էջերի քանակը և խնդրում է շտկել:

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակցի գործողությունները համարեց պայմանագիր կնքելուց հրաժարում և դիտավորյալ պայմանագրի կնքման ժամկետի ձգձգում, ինչի հետևանքով անհնարին դարձավ «Հոկտեմբերի 20-22-ը Գյումրի քաղաքի հյուրանոցում Իթվինինգի ուսուցիչների աշխատանքային խորհրդակցության անցկացման» ծառայության մատուցումը և գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1–ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետը որոշում կայացրեց մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից և օրենքով սահմանված կարգով «Իվենթ Սիթի» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06» ծածկագրով ԳՀ ընթացակարգի մասնակից «Իվենթ Սիթի» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը՝ աղյուսակի տեսքով.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Իվենթ Սիթի» ՍՊԸ	05025438	ՀՀ, Արագածոտնի մարզ, Աշնակ գյուղ, Վրեժ Իսրայելյան փողոց 42 տուն			«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետ Որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	04.12.2023թ. «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/06»

Տնօրեն՝ Արտակ Պողոսյան